«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

18 հոկտեմբերի, 2022 թ. N 24 - Լ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 62 - Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 2–րդ մասի 5-րդ կետը, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» թիվ 420-Ն հրամանը (այսուհետ՝ Հրաման), «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 8.1.7 կետը, Պալատի Որակի պահանջների պահպանման գնահատման և Կարգապահական հանձնաժողովների կանոնադրությունները, Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի (այսուհետ՝ ՀՎԽ) 2022 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 28-Լ որոշումը և նկատի ունենալով Պալատի նախագահին հասցեագրված ՀՎԽ-ի 2022 թվականի հոկտեմբերի 14-ի գրությունը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել Պալատի կողմից 2022-2023 թվականներին աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման (այսուհետ՝ Արտաքին գնահատում) ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Արտաքին գնահատումն իրականացնել Հրամանով սահմանված արտաքին գնահատման ընթացակարգերի և Պալատի ներքին իրավական ակտերի համաձայն:

3. Արտաքին գնահատումն իրականացնել 2022թ. նոյեմբերի 15-ից մինչև 2023թ. հուլիսի 15-ը:

4. Սահմանել, որ Արտաքին գնահատումն իրականացվում է ՀՎԽ-ի և Պալատի խորհրդի կողմից ներկայացված փորձագետների խմբի կողմից:

5. Պալատի Որակի պահանջների պահպանման գնահատման և Կարգապահական հանձնաժողովներին, Արտաքին գնահատում իրականացնող փորձագետների խմբին՝ ըստ անհրաժեշտության՝ Արտաքին գնահատման արդյունքներով ներկայացնել հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող ՀՀ նորմատիվ իրավական ակտերում և Պալատի ներքին իրավական ակտերում փոփոխությունների և (կամ) լրացումների առաջարկներ և (կամ) Արտաքին գնահատմանը վերաբերող (այդ թվում նաև՝ Հրամանով սահմանված արտաքին գնահատման ընթացակարգերին) իրավական ակտերի նախագծեր:

6. Ըստ անհրաժեշտության՝ Պալատի Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի առաջարկությամբ, Պալատի խորհրդի որոշմամբ և ՀՎԽ-ի հետ համաձայնեցմամբ համալրել 2023 թվականի երկրորդ կիսամյակում արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՎԽ-ի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Պալատի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 17-ի N 62 - Լ որոշումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի 2022 թ. հոկտեմբերի 18-ի N 24 - Լ որոշման

Հ/Հ	ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
2.	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
3.	«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ
4.	«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
5.	«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
6.	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
7.	«Այ էֆ Փի» ՍՊԸ
8.	«Էյ-էն Աուդիտ» ՓԲԸ